ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Գրետա Ադամյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի հունիսի 12-ից մինչև հունիսի 23-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ և Վիեննայի միացյալ ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են ֆինանսական զարգացման և ներառականության տարբեր հասկացությունները և խնդիրները, տնտեսության մեջ ֆինանսների դերը, ինչպես նաև՝ ֆինանսական շուկաների և դրանց զարգացման, շուկայի հիմնական խաղացողների և գործիքակազմի ուսումնասիրությունը, ֆինանսական շուկաների զարգացման խոչընդոտների բացահայտումը: Ներկայացվել է նաև ֆինանսական շուկաների զարգացումը խրախուսող պետական քաղաքականության դերը, հնարավորությունները և օգտակարությունը: Ընդհանուր առմամբ, այս դասընթացին մասնակցությունը հնարավորություն է տալիս ավելի լավ պատկերացնել ՀՀ ֆինանսական շուկայի զարգացման ներկայիս մակարդակը և դրա դերն ու հնարավորությունները մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացում:

5. Քննարկված թեմաները՝

1. Ֆինանսական զարգացման և ֆինանսական ընդգրկվածության մակարդակի (FDFI-ի) չափումը, ցուցիչները, չափման եղանակները և մեկնաբանությունը: Միջազգային տարբեր կազմակերպությունների Ֆինանսական զարգացման տվյալների բազաները:
2. Բանկերի դերը ֆինանսական համակարգում, առաջինն հայտնվելու պատճառները և ֆինանսական համակարգի վրա բանկերի գերիշխող դերի տրամաբանությունը:
3. Կապիտալի շուկայի զարգացումը: Դրամական շուկաների և պարտատոմսերի շուկաների զարգացման հաջորդականությունը: Պարտատոմսերի և արժեթղթերի շուկաների դերը և ֆոնդային բորսաների

վերջին հերթին հայտնվելու պատճառները: Աժեթղթերի շուկայի զարգացում, երկրորդային շուկա և իրացվելիություն: Տնտեսական աճի վրա ֆինանսական զարգացվածության ազդեցությունը:

4. ՓՄՁ-ների դերը տնտեսության համար, ՓՄՁ ֆինանսավորումը և դրա կարևորությունը: ՓՄՁ-ների և ավելի մեծ ձեռնարկությունների միջև տարբերությունները և ինչպես են այդ տարբերությունները հանգեցնում ֆինանսավորում ստանալու մարտահրավերների: Տարբերակում ֆինանսավորման մեթոդների և գործիքների միջև, վարկավորման հիբրիդային գործիքներ և դրանց օգտակարությունը ՓՄՁ-ների համար՝ հաշվի առնելով ՓՄՁ-ներին յուրահատուկ մարտահրավերները:
5. Տնային տնտեսությունների Ֆինանսական ներառվածության խթանում: Հասանելիության և օգտագործման դերը ֆինանսական ընդգրկվածության մեջ: Տնային տնտեսությունների ֆինանսական ընդգրկվածության նպատակները և առավելությունները: Կառավարության քաղաքականության և տեխնոլոգիաների դերը ֆինանսական ներառվածության մեծացման գործում: Ֆինանսական կրթության/գրագիտության նախագծերը և առաքման եղանակները: Տնային տնտեսությունների վարկավորման և աղքատության կրճատման միջև կապը: Ստվերային բանկեր:
6. Միկրոֆինանսավորում և Ֆինտեխ: Միկրոֆինանսավորման օգտակարությունը աղքատների ֆինանսավորման համար և դրա ազդեցությունը տնային տնտեսությունների և ձեռնարկությունների վրա: Ֆինտեխը և դրա տարբեր կիրառությունները, ինչու է դա կարևոր ֆինանսական ընդգրկման համար: Մոբայլ բանկինգը, վճարային համակարգերը և գործոնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են նրանց զարգացումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառմամբ ամրապնդման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, պատրաստվել պրեզենտացիաներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի մասնակիցների հետ, մասնավորապես.

- Մինի դեպքերի ուսումնասիրություն ֆինանսական զարգացման և ներառման վերաբերյալ:
- Կապիտալի շուկայի զարգացման առանձին դեպքի ուսումնասիրություն:
- Չինաստանում ստվերային բանկինգի դեպքի ուսումնասիրություն:
- «Per-to-Peer» վարկավորման զարգացման դեպքի ուսումնասիրություն և այլ թեմաներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները և հմտությունները օգտակար կլինեն երկրի ֆինանսական հատվածի վերլուծության, մակրոտնտեսական քաղաքականության մշակման համար, ինչպես նաև հնարավորություն կտան պատշաճ կերպով ապահովել հետևյալ գործառույթների իրականացումը՝

- Միջազգային կառույցների (Եվրասիական տնտեսական միություն, Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Ասիական զարգացման բանկ և այլն) կողմից կարծիքի և առաջարկությունների ներկայացվող զեկույցների, վերլուծական հոդվածների և այլ փաստաթղթերի ֆինանսական զարգացմանն և ներառականությանն առնչվող մասերի ավելի հասցեական ուսումնասիրություն և հիմնավոր առաջարկությունների ներկայացում,
- Տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներին օժանդակություն ֆինանսական շուկաների՝ արտաքին հատվածի կանխատեսումներին առնչվող մասով,
- Ֆինանսնական շուկաների մակրոտնտեսական կայունության համատեքստում խորությամբ հետազոտում և վերլուծություն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

28 հունիս, 2023թ.